ՍԻՐՈՑ ՊԱՏՐԱՆՔ

(«Էլէյնա», հոդեբանական էտիւդ, հեղ. Գ. Արծրունու)

ԵՐՈՒԱՆԴ Ղ.ԱԶԱՐԵԱՆՑԻ

Երբ մեր վիպական կամ թատերական գրուածքների մէջ պատահում ենք անաջող սիրոյ դէպքի՝ մենք ալդ շատ բնական ենք դանում և բոլորովին հասկանում ենք թէ ինչ է նշանակում ալդ։ Երբ Սունդուկեանցի Անանին («Էլի մէկ զոհ») երկար սիրալին տանջանքներից յետոյ՝ ստիպուած է լինում հրաժարուել իւր սիրած տղամարդուց՝ իւր ծնողների կամքը կատարելու համար, երբ ալդ հայ օրիորդը կամաւոր զոհ է դառնում ընտանեկան բռնութեանը՝—ալդ ամենը շատ հասկանալի և բնական է մեզ՝ հայերիս համար.—չէ՞ որ կինը ստրուկ է մեր մէջ. չէ՞ որ նա «իրաւունք չունի» իւր կամքով ում ուզենայ՝ սիրէ, ում ուզենայ՝ ատէ... Այսպիսով՝ հայ վիպասանը, կամ թատերագիրը բոլորովին իրաւացի է, երբ նա իւր գրուածքների մէջ դուրս է բերում այնպիսի հայ օրիորդներ, որոնք կարծես սիրտ չունին բոլորովին, կարծես նրանց մէջ սիրոյ զգացմունքը առաւտուրի, հաշուապիտութեան մի նիւթ է, կամ, աւելի ճիշդ ասած՝ որոնց սէրը այնքան թոյլ, այնքան մերենայական է, ամենրոպէ պատրաստ է ենթարկուելու ծնողական կամքի, ծնողական հաշիւների ազդեցութեանը։ Մեր մէջ սովորական բան է, եթէ մի երիտասարդ «էնդգնութիւն» է ունենում սիրալին բացատրութիւն անել մի օրիորդի հետ և նրանից փոխադարձը պահանջել՝—«ծնողներիս հարցրէք» կը լսէ օրիորդի բերանից։ Ալդ նշանաւոր «ծնողներիս հարցրէք» խօսքերով՝ հայ օրիորդը ցոյց է տալիս իւր բարոյական ոչնչութիւնը, ցոյց է տալիս, որ ինքը՝ լինելով ծնողների դաւակ, պարտաւոր է՝ աւելի հնազանդուել իւր ծնողների կամքին, քան թէ հետևել որ և է ներքին հոգեկան ուժեղ և մարդավայել ձգտման։ Հայ օրիորդը, հայ կինը մտածել անգամ չի կարող ալդ «բարձր բաների» մասին, նա շատ լաւ ճանաչում է միայն իւր պարտաւորութիւնները, շատ լաւ գիտէ, որ օրիորդը պիտի հնազանդ լինի իւր ծնողներին,

կինը—տղամարդուն, ուրիշ ոչինչ։ Այդ հնադանդելու զգացմունքը կազմում են մեր հայ ընտանիքի գլխաւոր հիմնաքարը, հնադանդելու կոյր, ստրկական ոգին թափանցում է մեր ընտանիքի բոլոր յարաբերութիւնների մէջ՝ սկսեալ ամենաչնչին տօրեալ բաներից, մինչև անհատների հոգեկան խնդիրները։ Ահա, այս է մեր հայ ընտանիքի բարոյական մթնոլորտը, և այդպիսի խեղդող, զարշահոտ միջոցներով լի մթնոլորտը չի կարող իւր մէջ սնուցանել և փայփայել սիրոյ, ինքոյ, և նաղելի պտուղը։ Այդ պտուղը դեռ ևս բոլորովին կանաչ և խակ՝ սկսում է թառամել, ցամաքել և վայր թափել, կեանքը կորցնում է իւր բոլոր գեղեցկութիւնը՝ խորասուզելով տօրեալ հոգսերի և դուռ անասնական վայելքների, զգացմունքների մէջ։ Այս տեսակ խեղդող, ճնշող և ամեն մարդկային բարձր զգացմունք ոչնչացնող հանգամանքների մէջ ապրելիս, մենք հայերս և, մանաւանդ՝ հայ կինը, հայ օրիորդը՝ սաստիկ փափաղում ենք գոնէ լսել, գոնէ կարդալ թէ՝ ինչպէս են ապրում ուրիշ, աւելի լուսաւոր և երջանիկ երկրներում, մարդիկ ինչպէս են սիրում, ինչպէս են ուրախանում, ախորում, ինչումն է կայանում նրանց երջանկութիւնը, նրանց վիշտը, նրանց հոգեկան-բարոյական պահանջմունքները։ Այդ ամենը սաստիկ հետաքրքիր է մեզ համար, որովհետև մենք մեր տանը ոչինչ չունինք, ոչինչ չենք տեսնում՝ բացի թանձր և լուռ խաւարի թաղաւորութիւնից։ Իսկ այնտեղ, մեզնից հեռու, հեռու Եւրոպայում՝ լոյս կայ, արեգակ կայ, ջերմութիւն կայ, որ տաքացնում, լուսաւորում է երջանիկներին։ Տեսնենք՝ ինչպէս են ապրում այնտեղ, տեսնենք։—Եւ ահա մենք տեսնում ենք...

II

Առաջին անգամը չէ, որ պ. Գ. Արծրունին փորձ է անում ծանօթացնել մեզ Եւրոպական կեանքի հետ։ Նորա «Մի տարի Շէյցարիայում» վերնագրով ճանապարհորդական գեղեցիկ գրուածքը դեռ ամենքիս փչոզութեան մէջ է։ Ես վիշում եմ, թէ որպիսի լափշտակութեամբ կարդացուում էին «Մշակ»-ի համարները, որպիսի բարձր ոգևորութեամբ լցում էր ընթերցողի սիրտը՝ կարդալով Շէյցարիայի կեանքի, նիստ ու կացի, հասարակական, ընտանեկան յարաբերութեան դեղեցիկ նկարագրութիւնները։ Իսկ այժմ հասարակութիւնը, համարեա նոյն լափշտակութեամբ կարդաց պ. Գ. Արծրունու «Էլէյլինա» վէպը, որ վերցրած է դարձեալ Եւրոպական կեանքից։ Ահա այդ պատմութեան բովանդակութիւնը։ Մի հայ ուսանող՝ (որի ազգանունը յայտնի չէ), կոստանդնապոլսեցի, որ տկարութեան պատճառով ապրում է Ֆրանսիայի ծովեզրեայ Նիցցա քաղաքում, պատահմամբ այդտեղ ծանօթանում է մի ֆրանսիացի օրիորդի հետ, Էլէյլինա անունով՝ և սիրահարւում է նորա վերայ։ «Էլէյլինան գեղեցկուհի էր՝ այդ բառի բուն նշանակութեամբ. դէմքի շատ նուրբ գծագրութիւն-

ների ու երեսի մորթիի սպիտակ գոյնի հետ. Նա իւր սև յօնքերի տակ ունէր Միջերկրական ծովի ջրի պէս կապոյտ, արտայայտիչ աչքեր. չքեղ շագանակագոյն մազեր, փոքր ինչ հաստ, բայց հրապուրիչ շրթունքներ, դորա հետ միասին և վերին աստիճանի շնորհալի կազմուածք ու քայլւածք... Նորա դէմքի գծագրութիւնը փոքր ինչ հրէական էր...»: Օրիորդը երաժշտուհի էր և ածում էր դաշնամուրի վրայ: «Նա ածում էր սքանչելի կերպով. մատների տեխնիկան աննման էր, փոքրիկ ձեռքերի ոյժը աներևակայելի էր...»:

Ահա այս տեսակ ոգևորիչ խօսքերով նկարագրում է հայ ուսանողը այն օրիորդին, որը հէնց առաջին անգամից կախարդել, գերի է դարձրել խեղճ երիտասարդին: Սակայն որքան էլ նա կախարդուած լինէր Լուէլինայի կապոյտ աչքերով, դարձեալ ստիպուած էր հեռանալ Նիցցայից և գնալ Շւէցարիա՝ ուսումը շարունակելու: Մանաւանդ որ օրիորդը իւր կողմից ոչ մի սիրային ակնարկ չէր արել ուսանողին, բացի այն, որ մնաս բարովի ժամանակ, իւր կապոյտ, հրաշալի աչքերով. խորը տխրութեան արտայայտութեամբ, նայել էր նորա աչքերի մէջ... Եւ եթէ ընդունենք, որ կանայք իրանց սէրը աչքերի հայեացքով են արտայայտում, եթէ ընդունենք, որ կինը իւր սիրած տղամարդուն բոլորովին ուրիշ կերպ է նայում, քան թէ այլ մարդոց,—և այդ սիրային նայուածքը չի կարող կեղծ լինել կանանց մէջ՝—այն ժամանակ ուսանողի արած ենթադրութիւնը թէ՝ Լուէլինան նոյնպէս անտարբեր չէր դէպի նա, հաւանօրէն ճիշդ կը լինէր: Հայ երիտասարդը մտնում է Ցիւրիխի համալսարանը, ամբողջովին կլանւում է գիտութեան բարձր գաղափարներով, բայց Լուէլինայի այդ վերջին հայեացքը դարձեալ չի դուրս գալիս նորա երևակայութիւնից. Նա շատ անգամ ծածուկ ոգոցներ էր հանում այդ աչքերի համար: Բայց այդ ամենը ի հարկէ կ'անցնէր, եթէ ինքը Լուէլինան նորից տեղիք չը տար ուսանողի սիրային զգացմունքներին, եթէ օրիորդը չգար ուսանողի ետևից Շւէցարիա և նրան, մի կախարդական նամակով՝ իմաց չը տար իւր գալու մասին: Ես ասում եմ «կախարդական» նամակ, որովհետև այդ նամակը գրուած էր վարդագոյն թղթի վրայ և նրանից անուշ հոտ էր գալիս... Կարելի է երևակայել թէ ինչպէս կազդէին այդ ֆանտաստիկական գոյնը և հոտը սիրահարուած երիտասարդի վառուած երևակայութեան վրայ: Դորա հետևանքը այն է լինում, որ ուսանողի յարաբերութիւնը Լուէլինայի հետ՝ նորից վերականգնում է, առաւել բուռն և ջղային ցնցումներով լի զգացմունքներով հանդերձ: Երիտասարդը այն աստիճան կլանւում է Լուէլինայի սիրով, որ առանց նրան, առանց նորա ներկայութեանը չի կարողանում կանոնաւոր և լուրջ պարապել, նա կարդում է և չի հասկանում Պրուդոնի շարադրութեան միտքը, իսկ գնալով օրիորդի մօտ, լսելով նորա դաշնամուրի հնչիւնները, այդ դիւթական հնչիւնների ազդեցութեան տակ բացւում են նորա մտաւոր աչքերը և նա սկսում է հասկանալ Պրուդոնի կար-

ծիքը՝ Աստուծոյ դաղափարի մասին... Ես կարծեմ՝ սրանից էլ աւել չի կարող լինել սիրոյ ազդեցութիւնը՝ մարդու վրայ։ Եւ մանաւանդ որ այդ սէրը շրջապատուած էր բոլոր էսթէտիկական յարմարութիւններով. Շէյցարիայում, ուսանողական անհոգ կեանք, դաշնամուրի մեղմ հնչիւններ. կապոյտ օրիորդական աչքեր, քնքոյշ, ստեղծագործող արուեստագիտական կանացի ձեռքեր—և, որ ամենագլխաւորն է՝ մի հայ երիտասարդ, հարուստ Ինողների զաւակ՝ բնութիւնից օժտուած առատ հոգեկան ճիրքերով, իդէալիստ, շուտ ոգեորուող, արեւելեան տաք բնաւորութիւն.

Այս ամենը շատ նպաստում էին հայ երիտասարդի սիրային զգացմունքները վառելուն և նա անհամբեր մտածում էր թէ՝ երբ պիտի վերջացնէ իւր ուսումը, որ ամբողջ հոգով անձնատուր լինի սիրած էակին։ Բայց նորա «սիրած էակը», գժբաղդաբար, այն դուրս չեկաւ. ինչ որ նա կարծում էր... Էւէլինան, կրկին վերադառնալով Նիցցա, պարապում է իւր արուեստով, ընդունում է ամեն կողմից հրաւէրներ՝ մասնակցելու զանազան երաժշտական ներկայացումների, դասեր է դտնում մասնաւոր տներում և, այդ բոլոր աշխարհային հոդսերի ու զբաղմունքների մէջ՝ նա այնքան է յոդնում, այնքան է ղղում՝ իւր աշխատանքով ապրելու կեանքից, որ հակում է դէպի մի հարուստ իսպանացի վաճառական նկարչի, որը խոստանում է օրիորդին հանգիստ խաղաղ կեանք, ազատ ամեն տնական հոդսերից ու զբաղմունքներից։ Այսպիսով Էւէլինան հրաժարում է իւր հայ իդէալիստ երկրպագուից, հրաժարուում է այն բոլոր հոգեկան վայելքներից, որ խոստանում էր նրան երիտասարդ ուսանողը և դորա տեղ ուզում է ստանալ հաստատ ապագայով, անհոգ և խաղաղ կեանք։ Մէկ խօսքով՝ Էւէլինան ուզում է այն տնական կեանքով ապրել, որին ռուսները անւանում են—„мѣщанское житье“. իսկ այդ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, և ահա թէ ինչու։

III

Բանը նրանումն է, որ Էւէլինան՝ իւր բոլոր արտաքին գեղեցկութիւնների ու շնորհքների հետ միասին՝ չունի այն ներքին հոգեկան ոյժը, որ կոչւում է մարդասիրական զգացմունք, այդ խօսքերի ընդարձակ նշանակութեամբ։ Պ. Արծրունու պատմութեան հերոսը ասում է, որ «օրիորդը ջոկւում էր միւս ֆրանսիուհիների մեծ մասից՝ իւր բաղմակողմանի զարգացմամբ»։ Բայց ամբողջ պատմութեան մէջ, բացի երաժշտական հմտութիւնից՝ ուրիշ մի առանձին բան չենք նշմարում Էւէլինայի մէջ, որով գաղափար կազմէինք նորա բաղմակողմանի զարդացման մասին։ Եւ եթէ ուղիղը խոստովանելու լինենք՝ օրիորդի գեղեցիկ աչքերից ու փոքրիկ, ստեղծագործող ձեռներից զատ՝ հէնց այդ երաժշտական հմտութիւնն էր, որ ամենից շատ դուր էր դալիս նորա երկրպագու հայ ուսանողին։

ճշմարիտ՝ «Իւէլլինան բացի ֆրանսերէնից, կատարելապէս տիրապետում էր անգլիերէն և գերմաներէն լեզուներին, ծանօթ էր այդ երկու ազգերի գրականութեան հետ», սակայն յայտնի չէ թէ՝ այդ երկու մեծ գրականութեան մէջ ինչ բանն էր գրաւում Իւէլլինային, արդեօք օրիորդը ունէր մի որոշ գաղափարական ձգտում, որոշ սկզբունք, ինչով կարողանար առաջնորդուել եւրոպական ազգերի գրականական ովկիանոսի մէջ: Բայց որովհետև այդ ամենը յայտնի չէ ուսանողի պատմածներից, ուստի մեզ մնում է, աչքի առաջ ունենալով Իւէլլինայի կեանքը, նորա հասարակական դիրքը, նորա պարապմունքը և ծանօթութիւնները՝ եզրակացութիւն անել օրիորդի հոգեկան ուժերի, նորա մտաւոր և բարոյական պաշարի վերաբերութեամբ: Ի՞նչ կարող է հետաքրքրել եւրոպական գրականութեան մէջ՝ մի օրիորդի, որ իւր ամբողջ կեանքը անց է կացրել երաժշտական ասպարիզում, որի բոլոր ընդունակութիւնները և ուժերը կենդրոնացած են եղել այն խնդրի վրայ թէ՝ ինչպէս կատարելագործել երաժշտութիւնը, որ նորա միջոցով քանի կարելի է շատ փող աշխատել, շատ նիւթական վարձատրութիւն գտնել, որպէս զի այդ փողերով թէ ինքը ապրի և թէ ապրուստ հայթհայթէ իւր ծերունի, անդամալոյծ հօրը և խորթ մօրը: Ի հարկէ շատ գովելի բան է օրիորդի կողմից, որ նա իւր աշխատանքով համ ինքն է ապրում, համ էլ իւր ծնողներին է պահում: Բայց այդ տեսակ առօրեայ, սովորական առաքինութեան համար՝ պէտք չեն ոչ մի առանձին հոգեկան մեծ ձիրքեր, ոչ էլ բազմակողմանի զարգացում: Այդ տեսակ ընտանեկան, նեղ բարոյագիտութիւնը մատչելի է ամեն հասարակ մահկանացուի: Եւ օրիորդ Իւէլլինան, իբրև որ՝ մի հասարակ մահկանացու է այնպէս, ինչպէս որ հասկացւում է մեր այժմեան ընդունուած, գործնական աշխարհում: Նորա մէջ չկայ ոչ մի բարձր գաղափարական ձգտում, ոչ մի հասարակական ընդարձակ բնազդում, որով կարողանար նա ոգևորուել, կարողանար համակրութիւն և մարդասիրական զգացմունք յարուցանել ուրիշների մէջ: Այս տեսակ օրիորդը ինչով կարող է հետաքրքրուել գրականութեան մէջ,—հեշտ է գուշակելը: Նորա հասկացողութիւնները, նորա ձըգտումները,—նորա ամբողջ հոգեկան աշխարհը պտոյտ է գալիս երաժշտութեան, նկարչութեան և փողի, հարստութեան շուրջը. Նորա կեանքի ամբողջ իդէալն է՝ գեղեցիկ, էսթետիկական յարմարութիւններով զարդարուած մի հանգիստ բնակարան, մի УЮТНЫЙ УГОЛОКЪ, որի մէջ նա կարողանար պահել իւր սքանչելի մարմինը, հեռու կեանքի փոթորիկներից, հեռու ամեն տեսակ կենսական հոգսերից և մտածմունքներից: Եւ օրիորդի ունեցած բազմակողմանի «զարգացումը» պէտք է հասկանալ դարձեալ այդ սալոնական մտքով, համեմատ նորա կեանքի ընդհանուր իդէալին: Ես զարմանում եմ թէ՝ ինչով կարող էր Իւէլլինան ջոկել միւս ֆրանսուհիներից, ինչով նա բարձր է իւր նման բազմաթիւ երաժշտուհի օրիորդներից և տիկիններից,—ինչպէս որ այդ ուզում է մեզ հաւատացնել

պ. ուսանողը։ Բայց նա սիրահարուած է, և այդ պատճառով կարելի է ներել նորա չափազանցութիւնները..։ Ձ'ունենալով ոչ մի հասարակական բարձր ձգտում, ոչ մի ընդհանուր մարդկային իդէալ՝ օր. Էւէլինան դորա փոխարէն՝ ունի գեղեցիկ աչքեր և ձեռներ, գեղեցիկ շագանակագոյն մազեր, ունի երաժշտական ձիրք, գիտէ աշխատել, գիտէ վայելել կեանքի բարիքները։ Բայց որովհետև նորա գեղեցիկ մարմինը չափազանց փափուկ և նուրբ է, որովհետև այդ մարմինը «պահելու» համար շատ հոգս և խնամք է հարկաւոր, ուստի նա շարունակ մտածում է այդ մասին, շարունակ տանջւում է այն մտքով թէ՝ երբ պիտի գտնի մի գեղեցիկ Փուալեար, որ ամէն բանով համապատասխան լինի իւր մարմնի գեղեցկութեանը։ Եւ նա այդ զարդարուն հիանալի Փուալեարը՝ ուզում է գտնել իտալանացի վաշխառու—նկարչի տան մէջ։ Միթէ այստեսակ «խելացի» օրիորդը կարող էր խաբւել և ամուսնանալ մի հայ երիտասարդի հետ, որ չը գիտես թէ ինչ օդային բաներով է ոգևորւում, որ մտածում է գրականական-հրապարակախօսական ասպարէզի մէջ որոնել իւր կեանքի նպատակը։ Ո՛չ, պարոն ուսանող, ձեր սիրած, պաշտած Էւէլինան ձեր ընկերացու չէ և երջանիկ էք դուք, որ նա ձեզանից խելացի վարւեց այդ դէպքում, երջանիկ էք, որ զրկւեցաք այդ հրեշտակից, այդ գեղեցիկ, փափուկ, բայց վտանգաւոր հրեշտակից։

Էւէլինայի նման օրիորդները ընդունակ չեն սիրելու, որովհետև սէրը զո՜հ է պահանջում, իսկ նրանց համար՝ իրանց եսը, իրանց մարմնի պիտոյքները, իրանց համար «սիրուն. կօկիկ. համեստ, մշտական բունը» ամէն բանից բարձր է կեանքի մէջ։ Նրանք չը գիտեն սիրել, չը գիտեն ոգևորւել, բարձրանալ այդ սիրով, չը գիտեն ամէն բան մոռանալ յանուն այդ սիրոյ։ Եթէ իմ ասածները ուղիղ չը լինէին, եթէ Էւէլինան. բացի կենսական վայելքներից և շահերից՝ ուրիշ աւելի բարձր, աւելի վսեմ հոգեկան պահանջներ ունենար,—այնժամանակ նա երբէք չէր կարող մտածել իտալանացի նկարիչ Անգոլիի մասին, այն Անգոլիի, որ փողի, հարստութեան համար՝ տաղանդ վաճառելը սկզբունք էր դարձրել։ Եւ ինչով է բարձր Էւէլինան այդ գործնական նկարչից. ինչով նա զանազանւում է իւր ընտրածից։

IV

Լսելով Էւէլինայի տուած սառը և գործնական բացատրութիւնները՝ իրանց ամուսնանալու արգելքների մասին՝ սիրահարուած հայ ուսանողը բոլորովին զարմանում, կորցնում է ինքն իրան։ Նա երբէք չէր սպասում այդ տեսակ «յանկարծական» փոփոխութիւն օրիորդի մէջ, նա այդ բոլորովին անկարելի էր համարում։ Արիւնս գլխիս էր զարկել, ես չը գիտէի ինչ անեմ... ես պարզ տեսնում էի այժմ, որ վերջին ժամանակներում իմ

առաջաւ իդէալիստ (?) Էէլինան բաւական մեծ աջողութեամբ օգտուել էր շրջապատողների գործնական դասերից»... Իդէալիստ... բայց որոնք էին օրիորդի իդէալները՝ այդ չի ասում մեզ Նորա երկրպագուն։ Իսկ Էէլինայի ամբողջ բնաւորութիւնը, Նորա բոլոր ձգտումները և իղձերը ամենևին ուրիշ բան են ասում մեզ։ Եւ մեզք չէ՞ ճշմարտութեան դէմ մեղանչել, մեզք չէ՞ շռայլել իդէալիստ խօսքը այն մարդու համար, որ իւր կեանքում՝ փող աշխատելուց զատ՝ ուրիշ բանի վրայ չի մտածել, որ իւր երաժշտութեան արուեստը միշտ իւր ապրուստի միջոց է դարձրել։ Եթէ Էէլինան վերջին ժամանակները ընդունակ է եղել «բաւական մեծ աջողութեամբ օգտուել շրջապատողների գործնական դասերից», ինչու չ՚ենթադրել, որ նա առաջ էլ կարող էր օգտուել նոյն դասերից, ինչու չ՚ենթադրել, որ հէնց այդ գործնական դասերով էլ կրթուել ու մեծացել է օրիորդը։ Մթթէ դորանից առաջ՝ օրիորդը էլի միևնոյն մարդուց, միևնոյն գեղարուեստագէտների, նկարիչների և երաժիշտների հասարակութեան մէջ չէր։ Եւ վերջապէս՝ մթթէ իսպանացի նկարիչ Անդոլի, այդ վերին աստիճանի գործնական, վաշխառու մարդը՝ էլի նոյն շրջանից չէր, էլի նոյն արուեստագէտների և նկարիչների դասին չէր պատկանում։ Ի հարկէ, նոյն դասին պատկանում էր և ռուս նկարիչ՝ Իւմասովը, այդ իսկական համակրելի, պաշտելի անձնաւորութիւնը։ Բայց ինչու Էէլինան չը հակուեց դէպի Իւմասովը՝ թէ՞ այդ մարդու խիստ բարոյագիտական համոզմունքները մարդոց թշուառութեան, տանջանքների ու ցաւերի մասին՝ չէին սազում որ. Էէլինայի նուրբ գեղարուեստական զգացմունքներին...

Սա այսքան երկար կանգնեցի Էէլինայի բնաւորութեան վրայ՝ երկու պատճառով. առաջին, որ Էէլինան կազմում է ամբողջ պատմութեան հիմքը, և Նորա վրայ կառուցած են չինութեան միւս բոլոր մասերը, և երկրորդ որ այդ օրիորդը, որպէս մի օտարազգի՝ առաջին անգամ մուտք է գործում մեր մէջ, ապա ուրեմն և մեր պարտականութիւնն է լաւ ճանաչել Նորան, ու դորա հանգամատ էլ՝ որոշել Նորա արժանաւորութիւնը։

Սիրահարած ուսանողի պատմածներին նայելով՝ Էէլինան մինչև վերջն էլ սիրում էր Նորան, բայց որ մտածում էր Անդոլիի կինը դառնալ՝ այդ մի մոլորութիւն էր օրիորդի կողմից, մի մեծ ճակատագրական սխալ էր, որի հաւար վերջը չատ պիտի զղջար օրիորդը։ Բացի դորանից՝ այս դէպքում, ուսանողի տեսակէտից նայելով Էէլինայի վրայ՝ դուրս է գալիս, որ այդ խեղճ աղջիկը մի տեսակ զոհ է դառնում իրան շրջապատող հանգամանքներին, որ Նորան խաբել, զրաւել է նկարիչ իսպանացին՝ իւր հարստութիւնով, իւր խոստացած խաղաղ և անհոգ կեանքով։ Սակայն այս տեսակէտը խախուտ և անհիմն է, որովհետև սիրահարած կնոջը,— իսկապէս սիրահարած՝—երբէք, ոչինչ խոստումներով ու հրապոյրներով չի կարելի գրաւել, խաբել, նա մանաւանդ Էէլինային, որ 22 տարեկան օրիորդ է, որ, ուսանողի ասածով՝ «իւր մէջ միացնում էր՝ Ֆրանսուհու

հաճելի, դուրեկան բնաւորութիւնը՝ զերմանուհու լուրջ բարք ու վարքի հետ։ Այս տեսակ «լուրջ» բնաւորութեան տէր, հասակն առած օրիորդին՝ չէր կարող գրաւել վաշխառու-նկարիչը իւր հարստութիւնով. եթէ Էէլինան լինէր իսկապէս մի իդէալիստ աղջիկ, եթէ նա իրաւ սիրէր ուսանողին և սիրոյ մէջ գտնէր իւր կեանքի գլխաւոր երջանկութիւնը։ Բայց Էէլինան ոչ իդէալիստ է, և ոչ էլ սիրում է հայ երիտասարդին, այլ միայն սիրախաղութիւն է անում նորա հետ և զւարճանում է, տեսնելով թէ՝ ինչ հոգեբանական էֆէկտներ է առաջացնում տաքարիւն արևելցու մէջ այդ սիրախաղութիւնը... Այո, ես սիրախաղութիւն եմ անւանում Էէլինայի այն վարմունքը որ նա, վարդագոյն թղթի վրայ՝ անուշահոտ նամակներ է գրում ուսանողին, որ նա երկաթուղու կայարանում՝ բաժանուելով ուսանողի հետ, առաջին անգամ նորան «դու» է ասում և հեռանում է նորանից... Բայց զարմանալին այն է թէ, ինչպէս այդ միջոցներով օրիորդը կարողանում է գրաւել, կաշկանդել մեր զարգացած, իդէալիստ հայ ուսանողին, միանգամայն արդարացնելով Պօլ Բուրժէի այն կարծիքը թէ՝ «տղամարդիկ առհասարակ սիրում են այն կանանց, որոնք նրանց անխիղճ կերպով խաբում են»։ Եւ ով կարող է կասկածել, որ հայ ուսանողը սաստիկ սիրում է Էէլինային, այն աստիճան կուրացած է սիրում, որ չի նկատում նորա մէջ ոչ մի պակասութիւն, և ընդհակառակը, վերագրում է նրան այնպիսի առաքինութիւններ, որոնց հետն անգամ չէ առել Էէլինան,—բաղմակողմանի զարգացած, իդէալիստ, տաղանդաւոր... մի խօսքով այն բոլոր լատկութիւնները, ինչով որ ինքն է ողեորւում, ինչ որ գոյութիւն ունին միայն նորա երևակայութեան մէջ։ Եւ այդ հանգամանքը մեծ թիւրիմացութիւն է առաջացնում Էէլինայի մասին՝ ուսանողի բոլոր պատմածների մէջ։ Դուրս է գալիս կատարեալ հակասութիւն նորա խօսքերի և Էէլինայի կատարած գործքերի մէջ, կատարեալ հակապատկեր։ Նորա ասելով Էէլինան տաղանդաւոր է՝—և հակւում է դէպի մի նկարիչ, որ տաղանդը վաճառելով է պարապում. իդէալիստ է՝—և միշտ «կոկիկ, սիրուն, համեստ բունի» վրայ է մտածում, բաղմակողմանի զարգացած է՝—և բաց վարդագոյն, անուշահոտ թղթի վրայ՝ կախարդական նամակներ է գրում հայ ուսանողին, մի տարի առաջ մի քանի ժամ նորա հետ խօսելու առիթ ունենալուց յետոյ։ Եւ այս բոլոր հակասութիւնների պատճառը այն ոչն է, որ զարթեցրել է ուսանողի մէջ Էէլինան՝ միակ իւր աչքերի, ձեռների և, մասամբ էլ պիանոի դիւթական հնչիւնների զօրութեամբ։

V

Այո՝ սէրը մոլորեցնում է մարդու, սէրը խլացնում է նորա դատողութեան ընդունակութիւնը և ստիպում է միայն զգացմունքով, երևակայութիւնով ապրել։ Որքան ըստ երևոյթին անհաճելի երևոյթ է մարդու հոգեկան

այդ դրութիւնը, բայց միևնոյն ժամանակ, այդ՝ մի ամենազօրեղ միջոց է, որով կարելի է բաց անել մարդու հոգին և կարդալ նորա իսկական, ներքին աշխարհի պատմութիւնը, կարելի է ճանաչել մարդուն այնպէս, ինչպէս որ նա է, ինչպէս որ ներկայանում է նա իւր սեպհական խղճի, իւր սեպհական զգացմունքների առաջ։ Այս է պատճառը, որ սիրային տարրը այնքան լաճախ մենք նկատում ենք վէպերի և դրամաների մէջ, այս է պատճառը, որ երբ մի գրող ուզում է ցոյց տալ հասարակութեանը իւր հերոսի հոգին, նա ստիպում է նրան սիրահարուել։ Շատ քիչ գեղարուեստական գրուածքներ կարելի է հաշուել, որոնց մէջ չը լինէր այդ սիրային տարրը, այլ մարդկային հոգու ուրիշ մոտիւներով պայմանաւորուէր գրուածքի դրաման։ Միայն Շէքսպիրի անմահ գրուածքները ունին այդ յատկութիւնը, միայն անգլիական մեծ բանաստեղծի համար միաչափ հասկանալի և մատչելի են մարդու հոգեկան բոլոր զրդումները և կրքերը՝ անկախ սիրուց, անկախ մարդկային երկու սեռի փոխադարձ ձգտման զգացմունքից։ Իսկ սովորական՝ Շէքսպիրի համեմատ՝ միւս «հասարակ մահկանացուները» սիրային զգացմունքի վրայ նայում են, որպէս մի ամենալաւ մոգական ուժի, որ կարող է երևան հանել մարդկային միւս բարոյական հակումները, իրանց բոլոր մերկութեամբ։ Տեսէք թէ՝ ինչ ազդեցութիւն է անում սիրոյ զգացմունքը հայ ուսանողի վերայ՝ «Էէլինա» գրուածքի մէջ։ Հայ երիտասարդը սիրահարւում է Ֆրանսիացի աղջկայ վրայ. սիրահարւում է, որովհետև օրիորդի աչքերը, ձեռները, դէմքը, շարժմունքները, ձայնը դուր են գալիս նրան—մի խօսքով՝ սիրահարւում է այնպէս, ինչպէս որ սիրահարւում են ամենքը։ Օրիորդը ոչ մի առանձին, աչքի ընկնող ընդունակութիւն չունի. նա մի համեստ և շատ սովորական աղջիկ է, որ բաղդաւոր հանգամանքների բերմամբ սովորել է երաժշտութիւն, դաշնամուրի վրայ է ածում, կոնցերտներ է տալիս և գորանով էլ ապրում է։ Բայց տեսէք թէ՝ ուսանողի համար ինչ է այդ համեստ արարածը։ Ինքը, ուսանողը իւր մէջ կրում է շատ հոգեկան դանձեր, շատ համակրելի, վսեմ զգացմունքներ և իղձեր։ Բայց որովհետև սիրահարուած է օրիորդի վրայ՝ նա իւր բոլոր ընդունակութիւնները վերագրում է օրիորդին, և համոզւում է, որ այդ նորա շնորհիւն է որ ինքը ազնիւ է, իդէալիստ է, նորա շնորհիւն է որ կարողանում է բարձրանալ մտքով, հասկանալ վերացական, աստուածային գաղափարներ։ Ուսանողի վառ արեւելեան երեւակայութիւնը շրջապատում է օրիորդին ամեն տեսակ հոգեկան պարգևներով, գեղեցկացնում, զարդարում է օրիորդի հոգեկան աշխարհը ամենահամակրելի առաքինութիւններով, այնպէս, ինչպէս որ գեղեցիկ է, զարդարուած է նորա արտաքինը, ինչպէս որ կախարդական է օրիորդի մարմնի բոլոր կազմութիւնը,—և, իւր երևակայած, այդ ֆանտաստիկական Էէլինայի առաջ՝ երկրպագութիւն է տալիս իւր ամբողջ հոգու անկեղծութեամբ։ Ուսանողի սիրած, պաշտած Էէլինան խօ այն իսկական Էէլինան չէ, որ գիտէ իւր «առօրեայ հաշիւները», այլ

մի ուրիշ, ֆանտաստիկական Լէէլինա, որ արտաքուստ բոլորովին նման է Ֆրանսիացի գեղեցկուհուն, իսկ ներքուստ՝ իւր մէջ ամփոփում է հայ երիտասարդի բոլոր իդէալները։ Եւ ահա, երիտասարդին թւում է, թէ Լէէլինան,—այն իսկական Լէէլինան, որին նա սիրում է, մի տաղանդաւոր, մի իդէալիստ, մի բազմակողմանի զարգացած օրիորդ է, որ ընդունակ է հասկանալ երիտասարդ հայրենասէրին, որ կարող է ոգեորել նորա բարձր, մարդասիրական գաղափարներով, ընդունակ է, իւր հետ միասին, ծառայել նորա ազգային գործին,—նորա հայրենիքը գիտութեան լոյսով լուսաւորելու ծանր գործին... Նրան թւում է, թէ Լէէլինան սիրում է նրան անսահման սիրով, թէ լանուն այդ սիրու՝ օրիորդը պատրաստ է տանել կեանքի ամեն տեսակ անկարմարութիւնները և հոգսերը, թէ նորա սիրուց՝ օրիորդը պատրաստ է մոռանալ ամեն, ամեն բան... Այդ բոլորը նրան թւում է, որովհետև նա սիրահարուած է, որովհետև ինքը ուսանողը այդպէս է հասկանում սէրը, այդ գաղափարներով, համոզմունքներով և իդէալներով է ապրում, շնչում, ոգեորւում։

Երիտասարդ ուսանողի երևակայած Լէէլինան ոչինչ կապ չունի այն իսկական Լէէլինայի հետ, որ դուրս է բերուած պ. Արծրունու հոգեբանական էտիւդի մէջ, բացի արտաքին գեղեցկութիւնից։ Եւ այդ է պատճառը, որ երբ իսկական, կենդանի Լէէլինան՝ հետևելով իւր սեպհական պահանջմունքներին և միտումներին՝ թողնում, հրաժարւում է իւր հայ երկրպագուից՝ կամենալով գտնել իւր համար մի հաստատ ապաստան,—հայ ուսանողը դարձեալ չի մոռանում իւր կարծեցեալ, երևակայական Լէէլինային և դարձեալ շարունակում է պաշտել, երկրպագել նրան։ Բայց նորա պաշտած Լէէլինան գոյութիւն չունի աշխարհիս երեսին,—այդ նորա ֆանտազիայի ծնունդն է, նորա իդէալն է, որ մարմնացնում է նա՝ իւր երևակայութեան ոյժով՝ մի հասարակ Ֆրանսուհու գեղեցիկ կերպարանքի մէջ։